

- **Երկրորդ սկզբունքը** առնչուած է *սովորութիւններուն*, որոնք կը զօրացնեն կամ կը տկարացնեն յոյգերու ազդեցութիւնը: Այլ խօսքով, սովորութիւններու ճամբով որեւէ արարք կամ որեւէ պատկերացում շատ աւելի հեշտ կը դառնայ. այս հեշտութիւնը կը յառաջացնէ հակում⁽⁷⁸⁾ (անգլ.՝ Tendency, գերմ.՝ Neigung) մը՝ դէպի վերոյիշեալ արարքը կամ պատկերացումը:
- **Երրորդ սկզբունքը** առնչուած է *առանձնայատուկ գաղափարներուն*, որոնք կ'ազդեն պատկերացման գործընթացին վրայ: Այլ խօսքով, եթէ նկատի ունենանք հաճելի զգացումները, որոնք մեզի քաջ ծանօթ են եւ որոնց մասին մենք առանձնայատուկ ու որոշ գաղափար ունինք, մեր վրայ աւելի մեծ ազդեցութիւն կ'ունենան: Կարելորութեամբ կը շեշտուի գաղափարներու առանձնայատկութիւնը, որովհետեւ որքան ընդհանուր ու ընդհանրականացած ըլլայ գաղափար մը, այնքան նուազ ազդեցութիւն պիտի ունենայ:

Հյում, տակաւին կը զանազանէ յոյգերու երկու գլխաւոր տեսակներ, իրենց ենթաբաժանումներով.-

- *Սկզբնական (քնազդային) յոյգերը*, որոնք կրնան ուժգին ու դիւրագրգիռ ըլլալ (ինչպէս՝ ծարաւը, քաղցը, մարմնական կիրքերը) կամ մեղմ ու հանդարտ (ինչպէս՝ սէրը, գուրգուրանքը, բարեացակամութիւնը). եւ
- *Երկրորդական յոյգերը*, որոնք կրնան ուղղակի բխիլ հաճոյքէն ու տառապանքէն կամ անուղղակիօրէն, ազդուելով վերոյիշեալ առանձնայատուկ ու որոշ գաղափարներէ: Հոս եւս, յոյգերը կրնան ուժգին ու դիւրագրգիռ ըլլալ (ինչպէս՝ սէրն ու ատելութիւնը, հպարտութիւնն ու խոնարհութիւնը, նախանձն ու կարեկցութիւնը) կամ մեղմ ու հանդարտ (ինչպէս՝ բարոյական հաւանութիւնն ու անհաւանութիւնը եւ գեղեցկութեան ու տգեղութեան հանդէպ՝ ենթակային անդրադարձը):

Հակառակ անոր որ Հյում փորձապաշտ փիլիսոփայ մըն է, սակայն ան նկատի կ'առնէ նաեւ *բանականութեան* պատասխանատու (բայց միշտ երկրորդական) դերը՝ բարոյագիտութեան, մանաւանդ «*միջոց-նպատակ յարաբերութեան*» (անգլ.՝ „Means-Purpose Relation“, գերմ.՝ „Mittel-Zweck-Relation“) մէջ կամ սխալ համոզումները ուղղելու մէջ: Այս իմաստով, բանականութիւնը առանձին չի կրնար բարոյական արարքի կամ իրավիճակի մը շարժառիթը ըլլալ: Հյում, աւելի յառաջ երթալով կը պնդէ, որ «*բանականութիւնը՝ յոյգերու աղախինն է*»:

(78) **Հակում** (Tendency) հասկացութեան մասին, տես «*Չգացում եւ Յոյգ*» յօդուածի առանձին բաժինը, Մաս – 9, էջ 455: